


## ԾՈՎԱՅԻՆ

ՏԱՐԵԿԱՆ ԵԼԵՒՄՈՒՏՔ

ԵՒՐՈՊԱԿԱՆ

ԳԼԻՖԻՈՐ ՊԵՏՈՒԹԵԱՆՑ

Ի շինութիւն և ի սպառագինութիւն պատերազմական նաւուց, և ուրիշ որ և իցէ մարտական իրաց համար եղած ծախքը արգեան եւ բոպական քաղաքականութեան պատճառաւ, իւրաքանչիւր տէրութեանց տարեկան ելումտից մէջ մեծ և նշանաւոր գումար մը կը կազմէ, և որ ընդհանրապէս տարի տարուան վրայ շատցած է քիչ շատ



Գաղղ. Բուս. Անգո. Գերմ. Աւստր. Իտալ.


Համեմատութիւնն վեց մեջ գետութեանց ծովային ծախոց 1889 ամին։

ամէն տէրութեանց մէջ, ինչպէս պիտի տեսնենք արդ. սկսելով սակայն 1874 էն, այսինքն է ֆրանսա - բրուսական պատերազմէն վիր. ջը, եւ մեր քննութիւնը պիտի ընենք միայն 6 մեծ գետութեանց վը-րայ, որը են Անգլիա, Գաղղիա, Գերմանիա, Աւստրիա, Իտալիա և Բուսաստան, սկսելով յԱնգլիոյ։

1874 ին Անգլիոյ ծովային ծախուց գումարն էր 195 միլիոն ֆռ.,

1874 ին աւելնալով եղաւ 208 միլիոն, հետևեալ տարին (1875) 218 միլիոն և 1876 ին՝ 229 միլիոն։ Ուսկից յետոյ տարի տարուան վրայ նուազելով մինչև 1880, կը հասնի 208 միլիոն։ Այս նուազութիւնը առ երեսյթ բան մէք, վասն զի անկէ վերջը մինչև հիմա ուրիշ բան չըրաւ բայց եթէ ամէն տարի յաւելով ծախուց գումարը, այնպէս որ 1885ին էք 258 միլ. յաջորդ տարին 264, և 1888ին՝ 288 միլիոն։ Վերջապէս 1889ին որոշելով խորհրդարանի մէջ աւելցընել ծովային ծախուց համար 50 միլ. որով ընդ ամէնն կը լինի մերձաւու բարպէս 330 միլ. ֆրանք, լնդհանրապէս Անդրդիոյ ծովային ծախուց գումարը միշտ երթալով աւելցած է, սակայն համեմատելով տէրութեան բոլոր ելումնից ծախուց գումարին հետ, կը տեսնենք որ իրա-

1874      1875      1880      1885      1889



1. Շնորհական - 2. Գումարիա - 3. Խուսափան - 4. Գերբանելիք -  
5. Խուսափան - 6. Աւագանութեան

#### Փոփոխութեան ծախուց զամազան Պետութեանց նկուղոյ 1871 – 1889

ըստ հետ համեմատական չեն զուգընթանար, և այսափ ինչ առ հարիւրը միշտ համեմատական չէ բոլոր ծախուց գումարին հետ. և այս անկէ յառաջ կու գայ որ տարիներ կան յորում ընդհանուր ծախուց գումարն սասափիկ կերպով յանկարծական բարձրացած է, 1812 միլիոնէն որ էք 1871 ին, 8 տարի վերջը 1879 ին բարձրացաւ 3220 միլիոնի տէրութեան ընդհանուր ծախսը. 1884 ին եղաւ 3126 միլիոնի, և 1889 ին էք 2153 միլ. իսկ ծովային ծախուց գումարն էք համեմատելով ընդհանուր ծախուց գումարին հետ 40,7% 1871 ին. 6,4% 1879 ին, 1888 էք 42,7% և 1889 45,8% իսկ միջին հաշուով է 9% իւրաքանչիւր տարւոյ համար։

Անցնիւք Գերմանիոյ : Շատ ժամանակ գրեթէ ոչինչ բան մ'աւել ցուց տարի տարւոյ վրայ Գերմանիա իւր նաւական զօրութեան է նպաստ . 1874 ին էր 47 միլ . ուժ տարի մինչև 1879 իւր գումարը տարի տարուան վրայ բարձրացուց , որ մինչև հասաւ 60 միլ . 80-88 նուազեցաւ դարձեալ 40 միլիոնի շափ , 84 ին-եղաւ 74 միլ . 86ին 62 ի իջաւ և 89 ին 66 միլ . էր : Նշանակելու է որ ծովային ծախուց գու մարին այս ոչինչ կերպով աւելնարուն միջոց ընդհանուր ելումնից ծախորը քառապատիկ շատցաւ այս 49 տարուան միջոց . 1874 ին էր 314 միլ . 1879 ին 840 միլ , 1888ին 1532 միլ . և 1890ին էր 1210 : Համեմատելով ծովային ծախորը ընդհանուր ծախուց հետ , 1871 ին էր 15.40% ուսկից վերջը միշտ նուազեցաւ մինչև 1889 , յորում էր 5.20% : Միջին հաշուով է 6.40% :

Աւստրիոյ ծովային շինուածոց ծախուց գումարը աւելի խեղճ է քառ զգերմանիոյ , և ընդհանուր ելումնից ծախուց գումարին պէս , ծովային ծախուց գումարն ալ ոչինչ տարրերութիւն կրեց 49 տարուան մէջ : 1874 ին էր 27 և յետ այլ և այլ անդամ իջնելու և ելլելու , 1889ին էր 28 միլիոն : իսկ համեմատութիւնը ծովային ծախուց ընդհանուր ծախուց գումարին հետ , 1874 ին էր 8.80% : յետոյ իջաւ 7 . 1882-83 ին եղաւ 9 , յաջորդ ամաց մէջ , և նուազելով գարձեալ եղաւ 8.4 1889 ին : իսկ միջինն է 8.4

Բոլորովին հակառակ ուղղութիւն բռնեց իտալիա իւր ծովային և ընդհանուր ծախուց համեմատութեան նկատմամբ : Ծովային ծախուց գումարը համեմատութեամբ ընդհանուրին եռապատիկ աւելցաւ : 1874 ին էր 36 միլ . յաջորդ տարիները եղաւ 40 , 44 , 46 : 1884ին յանկարծակի եղաւ 57 , յաջորդ տարին 78ի , 85ի 1886 ին և 1889 ին եղաւ 442 միլ :

Կը մնայ արդ մեզ խօսել մուսիոյ և Գաղղիոյ վրայ : Մուսիոյ նաւական ծախուց գումարը ամենէն աւելի փոփոխութեան ենթակայ եղած է , ինչպէս նաև ընդհանուր ծախորը : 1874 ին ծովային ծախորը էր 70 միլ . որ շատնալով 5 տարի շարունակաբար , 1876 ին եղաւ 100 միլ . և յետ քիչ մը ժամանակ ցածնալու , գարձեալ սկսաւ բարձրանալ մինչև 1884 յորում ամի էր 135 միլ : Յաջորդ տարին (1885) յանկարծական կը նուազի մինչև ց90 միլ . և 1886ին կը շատնայ մինչև ց156 միլ . 1887 ին դարձեալ կ'իջնէ 80 միլ . և յաջորդ երկու ամաց մէջ կը բարձրանայ դարձեալ և կը լինի 102 միլ :

Գաղղիոյ ծովային ծախուց գումարը 1874 ին էր 145 միլ . որ է ըսել 50 միլիոն պակաս Ընդդիոյ նոյն տարուան ծախորէն , մինչդեռ ընդհանուր ծախորն էր 3548 միլ . 4 տարի գրեթէ նոյն վիճակի մէջ մնաց բարձրանալով 4.10% էն 4.50% : 1876 ին ծովային ծախորը էր 165 միլ . և երթալով կը շատնայ մինչև ց1884 : յորում ամի էր 198 միլ . : իսկ ընդհանուր ծախորը նոյն տարուան մէջ էր 4167 միլ .

Դարձեալ կը շարունակէ բարձրանալ յաջորդ 4 ամաց մէջ լինե. լրվ 234 միլ. 254 միլ. և հուսկ ուրեմն 266 միլ. 1885 ին, որ համեմատելով ընդհանուր ծախուց հետ կը լինի 7%։ Ասկից վերջը կը սկսի տարի տարուան վրայ նուազիլ մինչև գ1889, յորում ամի էր 197 միլ.։ Իսկ ընդհանուր ծախուց հետ համեմատելով կը լինի 6.2, ընդհանուր ծախուն լինելով 3203 միլ.։

### ԽՈՐՈՒԹԻՒՆՔ ՍԵՒ ԾՈՎՈՒ

Անցեալ տարի թուս Զերնոմորէց մարտանաւն ուսումնական հետազոտութեան ելաւ Սև ծովուն վրայ, և հետաքննողքն էին Պ. Վրանկել (Wraangel) լրագէտ, Պ. Սպինդլէր (Spindler) երկրաբան-բնագէտ, և Պ. Անդրուսօֆ (Androussoff) բնապատմագէտ, և նաւապետն էր Սմիրնով (Smirnov)։ Աւզեռուելով յօտեսսայէ Զերնոմորէց այլևայլ անդամ կտրից անցաւ Սև ծովը դիմելով ի Սեւ աստապու, ի թէոդոսիա, ի Բատում և յիսկեղջիւր Գօմոյ։ Խորութիւնները չափելու համար գործածուեցան թուսոնի և Մէյէրի խորաշափ. ներն, իսկ ծովուն յատակիր գտնուող նիւթոց քննութեան համոր գործածուեցաւ այն տղմահան գործին զոր ի կիր արկին թալիզմանի ուսումնաբնիք։ Դարձեալ ջրոյն ըստ խորութեան ներմութեան տարրերութիւնը իմացան Միլլէր-Գածէլլա և Նէկրէտափ-Եսամբրա դրութեամբ լերմաշափներով։ Իսկ ջրոյն խտութեան չափը իմանալու համար գործածեցին հաստատուն ծանրոցով խտաշափը։

Մեծագոյն խորութիւնը գտնուեցաւ ծովուն երկրաշափական կեցրոնին մօսերը, այն գծին վրայ որ կը միացնէ զթէոդոսիա ընդ Սինոպի, և էր գրեթէ 2250 մետր։ Այս կետէն սկսեալ մեկնելով գէտպ յեղիքը ամենայն ուղղութեամբ բաւական միջոց՝ ծովու յատակին մակերևոյթը գրեթէ զուգահեռական է, այնպէս որ Սև ծովուն մեծագոյն մասը՝ երկայն և տափակ ամանի մը ձեւն ունի։ Ընդ մէջ Ղըրիմու և Անատոլիայ ինչպէս որ կը կարծէին ծովու յատակը բարձր չգտան, նմանապէս այն ահագին խորութիւնները զոր կը յուսային գտնել կովկաս լերանց ստորոտը։ Այս ստոյգ է որ կովկասու ստորոտին շեղութիւնն կը շարունակուի նաև ծովուն մէջ, սակայն քիչ մը տեղ, և վերջը կը տափարակի։ Ամենաքիչ խորութիւն ունեցող մասը կը գտնուի ծովուն հիւսիսային արեմուեան կողմը, ընդ մէջ դաստիքի և Տներերի մէկ կողմանէ, և միւս կողմանէ այն գծին որ կը միացընէ գլուխկա ընդ Եւպատորիոյ, և որոյ տարածութիւնն է 884,500 քառակուսի հազարամետր, որոյ խորութիւնն է առ առաւելն 480 մետր, յատակը՝ տափարակ, և քիչ մը առ ի շեղ գէտը հարաւային արեելք։